ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

-- դեկտեմբերի 2020 թվականի №--Ա

քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ԴԵՍՊԱՆՈՒԹՅԱՆԸ ՌԱԴԻՈՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2020 թվականի հոկտեմբերի 19-ի №ԳԲ/34.2-Մ2-9/4373-2020 գրությանն ի պատասխան Հայաստանի Հանրապետությունում Ռուսաստանի Դաշնության դեսպանության 2020 թվականի դեկտեմբերի 9-ի՝ ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվություն տրամադրելու վերաբերյալ գրությունը,

բ) որ ռադիոհաճախականությունների օգտագործման վճարների գանձման փոխադարձության սկզբունքի կիրառման վերաբերյալ Հանձնաժողովի հարցմանն ի պատասխան Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության պետական արարողակարգի ծառայությունը 2017 թվականի հունիսի 2-ի գրությամբ հայտնել է, որ Ռուսաստանի Դաշնությունում Հայաստանի Հանրապետության դեսպանությանը տրամադրված հաճախականության համար որևէ վճարում չի կատարվում, և

հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «ժդ» ենթակետը, 3-րդ կետը, 17-րդ հոդվածը և Հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 2-ի №297Ն որոշումը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Բավարարել Հայաստանի Հանրապետությունում Ռուսաստանի Դաշնության դեսպանության հայտը և Երևան քաղաքում ամրակցված արբանյակային կապի երկրային կայանի շահագործման համար տրամադրել 14038,50ՄՀց/10993,75ՄՀց, 14084ՄՀց/10983,25ՄՀց, 14353,20ՄՀց/11058,20ՄՀց և 14275,50ՄՀց/11048,20ՄՀց հաղորդման/ընդունման ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվություն՝ մինչև 2030 թվականի դեկտեմբերի -- -ը գործողության ժամկետով:

2. Հաստատել Հայաստանի Հանրապետությունում Ռուսաստանի Դաշնության դեսպանությանը Երևան քաղաքում ամրակցված արբանյակային կապի երկրային կայանի շահագործման համար տրամադրվող 14038,50ՄՀց/10993,75ՄՀց, 14084ՄՀց/10983,25ՄՀց, 14353,20ՄՀց/11058,20ՄՀց և 14275,50ՄՀց/11048,20ՄՀց հաղորդման/ընդունման ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվության պայմանները՝ համաձայն հավելվածի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020 թվականի դեկտեմբերի -- -ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք.Երևան
-- դեկտեմբերի 2020թ.